

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԽԱԿԱՆ ՈՒՆԵՆ ԲՂԹԱՍԱՐԹԻՒՆ
ՊԵՏԵՐ ԵՆՈՂՂԱՆ ԱՍ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագրիներն եւ չեն գործուիր,
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՐՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒՄԹ ՕՐԵՐԸ

ԲԱՍՏԱՆԱՐԿԱՆ ԲՈՒԹԻՒՆ

ԵՂԻՊՏՈՍ	
Գանձիւրի համար	սարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան 60
» » վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏԱՐԱՆԻ ՇՈՒՄԹ	
Տարեկան	Փրանկ 18
Վեցամսեայ	» 10

ԲՈՒՄԻՈՑ ԵՒ ԿՈՎԱՍԹ ԶՈՒՄԹ	
Տարեկան	Բուլբի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱՍՏԱՆԱՐԿԱՆ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՒ ԲՂԹԱՍԱՐԹ ԾԱԽԻՐ
Թեքից վարչութեան վրայ և

ՇԱՐԱԹ ԴԵԿՏ. 23/5 ՅՈՒՆ. 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 60

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ ՏԱՐԻՈՑՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ
ՍԿՍԵԱՎ ՎԱՐՁՈՒԹՆԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒԹԻՑ ԵՒ ՍՄԻՐՆԱ
ՓԱՍՏԱՑՆԵՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՁԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ» Ի ԸՆԿԱՎԱՐՈՒՄԵՆ
ԱՆՎԱԿԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒՆ:

ՄԵՐ ՍԵՂԱՆԱՒՈՐՆԵՐՈՒՆ

Որ երկիր որ ալ ըլլայ, եթէ մէկը
գրամական ներդրածն մէջ գտնուի,
կը հարկադրուի փոխառութեան դի-
մել:

Եղիպտոսի մէջ երբ ատանկ բան մը
պատահի, դրամի պէտք ունեցողը
թող անհոգ ըլլայ եթէ հողի և կամ
կայուածի տէր է: Կրնայ անմիջապէս
Գոթի-Պոնոպէս երթալ ու իր հողը և
կամ տունը գրաւ դնելով, 0/0 8 տու-
կոսով 100 ոսկիէն մինչև 20—30,000
ոսկի փոխ առնել: Գացէք որ մը Գրու-
էտի-Պոնոպէս, պիտի տեսնէք որ Ե-
ղիպտոսի էն կարևոր հողատէրերը հոն
ժողոված են, մէկը 10,000 ոսկիի մի-
ւոր 20,000 ոսկիի փոխառութեան
թուղթեր կը ստորագրեն, 10—15
տարիէն հասուցանելու երկարատե-
պայմանաւանդութեամբ:

Գոթի-Պոնոպէս 1882էն ի վեր իր
հաստատութեան թուականը կը շա-
րունակէ սոյն ծառայութիւնը մատու-
ցանել անդադար իր փոխառուներուն
ասոր ըսելիք չունինք:

Գաղով հող և կամ տուն չունեցող-
ներուն համար, ասոնք ի՞նչ ընեն եթէ
գրամի պէտք ունենան, քանի որ Գոթ-
ի Պոնոպէսն առանց կալուածի միլիէմ
մը փոխ չի տար:

Կառավարութիւնը ասոր ալ ճարը
մտածեց: Հաստատեց Եղիպտոսի
գրամատունը, որ պարզ պարտավոր-
հակալ ալ առանց գրաւի փոխառու-
թիւն կրնէ, սա պայմանաւ որ ստորա-
գրութիւնը երաշխաւորեալ և ծանօթ
ըլլայ:

Այն որ երաշխաւոր չի կրնար
տալ, կրնայ եթէ գահարեղէն ունի,
գրաւ դնել յիշեալ գրամատունը և
փոխ դրամ առնել:

Եղիպտոսի գրամատունը չի հաս-
տատուած, կարգ մը սեղանաւորներ

մեծաւ մասամբ Հրեայ և Հայ ատնց
մեծ մասը Արապիկոյի մեծապէս օգ-
տուած էին առիթէն, մինչև 0)0 60
տոկոսով գրամին շահեցնելով:

Մինչև ցարդ Եղիպտոսի Կառու-
վարութիւնը ու է սպառնալի միջոց
ձեռք առած էր, Այսպիսի գրամա-
տուններու, սեղանաւորներու, վերջա-
պէս փոխառութեան արուեստով
զբաղողներու գործառնութեանց մտ-
սին:

Ասոնք իրենց պարտաւորութեանց ըն-
թացքին մէջ ու է բարձրագոյն հակա-
զուծեան ենթարկուած չըլլալուն,
ասպարէզը ազատ գտած ուղածնուն
պէս, կառնէին կուտային: Միշտ փո-
խառուները կը հրճուէին ի մեծ քրաս
փոխառուներու:

Եղիպտոսի Կառավարութիւնը ի-
րաց այս վիճակին դարման մը գտնե-
լու համար անցեալ տարի Եղիպտոսի
Գրամատուն (Պանգ Նախօճալ տէժ-
իրդ) ը հիմնեց, յուսարով սր այն հաս-
տատութիւնը պիտի կրնար չափաւո-
րել քիչ շատ սեղանաւորներու սրտով
զեղծումները:

Իսոյ և այնպէս անոնք ըստ առաջ-
նայն շարունակեցին ևս աւելի շահա-
գործելու ժողովրդեան միամտութիւ-
նը ասոր անձուկ պարագայներէն օգուտ
քաղելով:

Ասոր վրայ Կառավարութիւնը սե-
ղանաւորներուն աւելի ազդու գտն մը
տալու համար, պատրաստեց կանոնա-
գիր մը:

Սոյն կանոնագիրը օտարազգայնու-
ներու նկատմամբ նաև գործողութի
ըլլալու համար, Միջազգային ակում:
բին կողմէն ևս վաւերացուցաւ:

Ահաւասիկ սոյն կանոնագրի գոր-
ծադրութիւնը հրամայող Խրտիվական
հրովարտակի թարգմանութիւնը՝ զոր
նոյնութեամբ կ'արտասուպենք հոս, առ-
նելով «Ժուռնալ Օֆֆիսիէլէն» Կը
յուսանք թէ Հայ սեղանաւորները բարի
օրինակ հանդիսանալէ եւ չպիտի կենան
կանոնագրէն, ամէն բանէ առաջ յարգե-
լով խիզը և պարկեշտութիւնը որ
պէտք է իր դերը կատարէ ամէն գոր-
ծի մէջ:

Յօդ 1. — Կառավարութեան նա-
խապէս արտօնութիւն չառած, գրաւա-
ւոր-փոխառու տուններ հաստատել ար-
գիւել է: Սակայն և այնպէս ներկայ

հրովարտակա լաճնութիւնը, և պար-
տաւորահակի նման գրամներու համար
չէ, ոչ ալ ապրանքներ, արմարներ գը-
րաւ առնելով դրամ փոխ տուողներու
համար:

Յօդ 2. — Արտօնութիւնը պիտի առ-
նուի ներքին գործոց նախարարէն, որ
պիտի կրնայ հարկ տեսած ատեն հըս-
կել այդ հաստատութիւնները: Հըս-
կիչները պիտի կրնան քննել ստմար-
ները, փաւերացնել գրամներու էու-
թիւնն ու հանգամանքը, և հաստատել
թէ՛ օրէնքին և կամ արտօնագրին տը-
րամագրածները ի նկատի աճում ան:

Եթէ այլ հաստատութեան տէրը
օտարազգայնակ է, առաջու ընէ իր հիւ-
պատասարանին իմաց պիտի տրուի որ-
պէտք է արուի, ինչպէս նաև գրաւ
անուած առարկայները և ասոնց պահ-
ուած տեղերը:

Երբ որ հրդեհ պատահի կամ գը-
րաները կորուին, գրաւաւոր հաս-
տատութիւնը պատասխանատու պիտի
ըլլա, առեւտրով գրամներու դիմը,
աւելի դիմերուն մէկ չըրորդը:

Յօդ 3. — Ամէն գրաւաւոր հաս-
տատութիւն կառավարութեան միջո-
ցաւ հրդեհի դէմ սպառնալիքով
պէտք է արուի, ինչպէս նաև գրաւ
անուած առարկայները և ասոնց պահ-
ուած տեղերը:

Երբ որ հրդեհ պատահի կամ գը-
րաները կորուին, գրաւաւոր հաս-
տատութիւնը պատասխանատու պիտի
ըլլա, առեւտրով գրամներու դիմը,
աւելի դիմերուն մէկ չըրորդը:

Յօդ 4. — Ամէն անգամ որ դրամ
արուի, փոխառուին ձեռքը թող մը
պէտք է արուի օրուն վրայ պիտի նը-
շանակուին 1. փոխ տրուած գումարին
քանակը, 2. գրաւին մանրամասն նկա-
րագրութիւնը, 3. գրաւին գինը, 4.
վճարման պայմանաւանդը:

Գրաւին տէրը պէտք է գրաւին
թուղթին տակ ստորագրէ, և եթէ գիր
դրել չ'գիտար, այդ թուղթը պիտի
ստորագրուի իր երաշխաւորին կողմէ:

Երկու հարիւր յիսուն զը. էն պա-
կաս արժող գրամներու համար չ'են
այս օրինական ձեւակերպութիւնները:

Յօդ 5. — Փոխ տրուած գրամին
համար 0/0 9էն վեր տուկոս չի պիտի
կրնայ առնուիլ: Միայն թէ արժեքը
որոշելու, զայն կշռելու և պահելու հա-
մար եղած ծախքերու անուամբ ստոր-
մը պիտի գանձուի փոխառուներէն:

Թիտոն գահականէն պակաս փոխա-
խառութիւններու համար, այս սուրբը
0/0 4ը չը պիտի անցնի: Իսկ յիսուն
գահականէն աւելի փոխառութիւննե-

րուն համար 0/0 2ը:

Այս սուրբը տարւան մը համար է.
գրամ առնողը ուզէ մէկ օր թողու
գրաւը, ուզէ 12 ամիս:

Յօդ 6. — Փոխառութիւնները երեք
կամ վեց ամսուան համար պիտի ըլ-
լան, սակայն պայմանաւանդ ըլլանա-
լէն վերջը՝ փոխ տուող ու փոխ առ-
նողը իրարու հետ համաձայնելով կըր-
նան յիշեալ պայմանաւանդ երկա-
րած գել:

Յօդ 7. — Պայմանաւանդ ըլլանա-
լուն երբ գրամը չ'վճարուի, գրաւա-
ւորն՝ վաճառականական օրէնքի գը-
րամներու վերաբերեալ կանոններու
համաձայն՝ օրինական միջոցներով գը-
րաւին վաճառմանը պէտք է ձեռնարկէ:

Յօդ 8. — Եթէ ծախուած գրամին
արժեքը փոխառուին տուած գրամէն,
անոր ստիպէն, պահելու և դատարա-
նի համար եղած ծախքէն աւելի ըլ-
լայ, աւելցած գրամը մինչև երեք տա-
րի գրաւին տիրով՝ ստրամադրութեան
ներքե պիտի մնայ, առանց սոյն վեր-
ջինը իրաւունք ունենալու գրաւաւորէն
ստիպ պահանջելու այդ աւելորդ գը-
րամը իրեն քով մնացած ըլլալուն հա-
մար:

Յօդ 9. — Ո՛վ որ հակառակ սոյն
կանոնագրի 1. յօդուածին, գրաւով
փոխառութեան տուն մը կը բանայ
և կամ կը շահագործէ, առանց կան-
խաւ արտօնութիւն առնելու, մէկէն
մինչև եօթը օր բանտարկութեան պի-
տի ենթարկուի:

Գատարանին վճիռովը պիտի փակ-
ուի այդ հաստատութիւնը:

Ներկայ հրովարտակին արամագրու-
թեանց հակառակ վարուելները 24
ժամէն մինչև մէկ շաբաթ բանտար-
կութեան և 10—100 զը. տուգանքի
մը պիտի ենթարկուին, կամ այս պա-
տիճներէն միայն լալ Մեղմայոցից պա-
րագաներ ի նկատի առնելով հանդերձ,
հաստատութիւնը պիտի կրնայ փակ-
ուիլ:

Յօդ 10. — Տասներկու տարեկանէն
վար եղող աղոց, գինիներու, հաշաշ-
ներու, կամ մուսլին հիւսնողութիւն
ունեցողներուն գրաւով գրամ փոխ տալ
և այդ արուեստով զբաղելու համար
խանութ բանայը բարձրովն շարժի-
եալ է:

Յօդ 11. — Միմիայն ներքին Գոր-
ծոց նախարարութեան կողմէն արտօն-

ուած անձինք պիտի կրնան որոշել գրաւներու արժէքը :

Յօդ. 12. — Երբ որ գրաւ գրուած աւարական գողութի նկատուի, այն ատեն այն տուարկային տէրը պարտի օրինական միջոցներով իր սեպհակա- նութիւնը ըլլալը հաստատել :

Իր սեպհակաւորութիւնը ըլլալը հաս- տատելէ յետոյ պէտք է հաստատուել այդ աւարկայով փոխ առնուած թէ գրամը և թէ տակտը : Բայց եթէ փոխ տուողը գրաւին գողցուած պարանք ըլլալը գիտնալով փոխ տուած է, այն ատեն պարտաւոր է գրաւը վերագար- ձնել բուն տիրոջ առանց այն վերջի- նէն իրաւունք ունենալու գրամ և տու- կոս անուամբ ու է բան մը պահանջելու :

Յօդ. 13. — Սոյն հրովարտակը գոր- ծադրելի պիտի ըլլայ իր հրատարա- կո թնէն մէկ ամիս վերջը :

Հետևաբար 27 Յունիսըն սկսեալ արժուան կեցեք :

ՄՈՒՅԵՂԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

Շարունակութիւն 36 թիւն

Ամեն տարի հաղարաւոր թուրք ուխտաւորներ կանցնին Եգիպտոսէն Մեքքէ երթալու համար :

Օրին մէկը ուշադրութեամբ դիտե- ցէք այդ սլաւաճական ճամբորդներէն զինուորի մը, խանութպանի մը, և կամ Գասթամարցի չընուն պտղավաճառի մը դէմքը, եթէ թուրքիոյ գաւառներ- րուն մէջ պտտած ու սերտած էք ա- տոնց կեանքը, անշուշտ չէք անգիտեր թէ ատոնց ամէնքն ալ իրենց գաւառ- ներուն մէջ մէկ մէկ ինքնակալի հո- վեր առած, քրիստոնէին նամանաւանդ հայուն վրայ իշխելու և զայն իբրև ստրուկ գործածելու գաղափարով տու- գորուած յաղթական հերոսներ են, որոնք օտարութեան մէջ, երոպական հողին վրայ ուր քրիստոնեայ ազգե- ցութիւնը կը տիրէ ինչպէս որ մասամբ Եգիպտոսի մէջ, մէյ մէկ խոնարհ և հաւասար եղբայրներ կը ձևանան :

Ասոր պատճառը պարզ է. թուրքը սա գաղափարին կը ծառայէ թէ ինչ ըսել է որ յաղթուող մը յաղթողի (ֆաթիհ) մը շուքին տակ ապրի և անոր հաւա- սար իրաւունք ունենայ. երբ մահմե- տական իշխանութիւնը գրաւեց հայուն երկիրը և ջնջեց անոր անկախութիւ- նը, երբ խլեց զայն իր քրիստոնեայ իշխանապետներու ձեռքէն ու առա- իր ստուերին տակ, այդ օրէն հայը դատապարտուեցաւ գիրի կեանք մը վարելու. թէրև առարկուի թէ կիւ- խանէի օրէնագրութիւնը և կամ Միտ- հաթ փաշայի սահմանադրութիւնը առանց կրօնքի և ազգի խտրութեան, միևնոյն իրաւուքը տուած են հայերուն ինչ որ թուրքիւն. Այդ առարկու- թեան պիտի պատասխանեմ, զիտեղ տալով նոյնինքն թուրք դիւանագէտի մը կարծիքը, զոր ժամանակին յայտ- նած էր բնելով թէ « որչափ ատեն որ հայը՝ թուրքին հպատակ ազգ մը ճանչցուի, անկարելի է որ այդ երկու տարրին մէջ արդարութեամբ հաւա- սարութիւնը բաշխուի. Այո հայը

կրնայ թուրքին պէս պաշտօններու մէջ գործածուիլ, բայց ինչո՞ւ համար թուրք մը և հայ մը միևնոյն պաշ- տօններն ունենալով հանդերձ՝ թուրքը՝ իրեն պաշտօնակից հայուն վրայ իշ- խելու գաղափարով կը տողորուի. Եւ մի մոռնաք որ եթէ օր մը առիթը զայ որ թուրք վարչութիւնը հայուն գործակցութեանը պէտք չունենայ՝ զայն բոլորովին կը զրկէ պաշտօնէն և իր հաւասարութեան իրաւունքէն :

(Շարունակելի)

բ.

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ԲԱՇԱ ԵՒ ՀԱՅՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

(Շարժ. թիւ 57 էժ և վերջ)

Ինչպէս որ հանրածանօթ Խալիլ Ղանիմ նաև « Մէշլէրէթ » ի վերջին թիւերէն միոյն մէջ, Օտոմանեան Սահ- մանագրական օրէնքին վրայ գրելու առիթիւ, նոյնը կրկնեց խօսքը ուղղե- լով հայերուն այսպէս « Ո՞վ հայեր, եթէ ձեր վիճակը և աշխարհագրական դիրքը ներքին, մեր ժէճ թուրքիս ձեր անկախութեանը երբէք չը պիտի հակառակէինք. բայց ո՞վ կրնայ ուրա- նալ թէ հայերը ատոնցմէ զուրկ չեն. քանի որ Ռուսիա Մայր-Հայաստանի մէկ կտրևոր մասին վրայ արդէն ձեռք դրած է, քանի որ պարսիկները և թուրքերը միւս մասը իրենց մէջ բաժ- նած են, և դուք ալ շատ լաւ հա- մոզուած էք որ Ռուսիա ձեզի ու է իշխանութիւն չի տալէ զատ, բացար- ձակապէս պիտի հակառակի որ թուրքն ալ չի տայ ձեզի ու է անկախութիւն :

Ուրեմն քանի որ ինքնօրինակութեան յոյս չի կայ, անխափանութիւն չէ միթէ՞ ունայն տեղը աշխատիլ :

Իրայ այս վիճակին մէջ, ո՞վ հայեր՝ ձեզ երկու բան կը մնայ ընկիւր. կամ Սուլթանին թիւին տակ մտնել և անոր ապաւինիլ, և կամ ժէճ թուրքերու հետ միանալ ու Սահմանագրութեան վերահաստատութիւնը պահանջել ընդ- հանուր թուրքի մէջ « այս է ձեր շահը » :

Ի մի բան ժէճ թուրքերը կը պա- հանջեն որ Միտհաթ փաշային Սահ- մանագրութիւնը յարգուի, առանց կրօնքի և ազգի խտրութեան բարե- նորոգումներ մտցուիլ թուրքի բոլոր գաւառներուն մէջ, հայ և թուրք հա- ւասար իրաւունք ունենան օրէնքին առջև, հայ կուսակալներ ընարուն հայաբնակ քաղաքներու համար, հայ երեսփոխաններ նստին ժողովներու մէջ, որով հայերուն կեանքը, պատիւը և ինչքը ապահովուած ըլլալով, տրտըն- շալու տեղի չմնար այլևս Ընդհակա- ոսկը ժէճ թուրքերը իրենց բոլոր ուժով կը հակառակին որ ինքնավա- րութիւն և կամ առանձնաշնորհեալ վարչութիւն չը տրուի հայերուն :

Ինչո՞ւ համար հակառակին ժէճն. թուրքերը ինքնօրինակութեան, քանի որ հայը իր յաղթանակուած սեպհակա- նութիւնը կուգայ ետ պահանջել յա- նուն անկախութեան :

Ինչո՞ւ Աճմէտ Ռիզա, և Խալիլ Ղա- նիմ չեն ուղեր ըմբռնել թէ իրենց

երկրին ապագան ուեյի ուպահովուած կըլլայ, եթէ հայերուն ինքնօրինակութիւն տրուի Իրայի հզօրագոյն կայսրու- թեան մը գէ՞մ պատուար մը կանգնել ամեն տեսակէտով շահաւոր է Թուր- քից համար, և այդ պատուարն ալ Հայկական ապագայ պետութիւնը պիտի կրնայ ըլլալ : Բայ տատի հայը իր անկախութիւնը ձեռք ձգելով, կնճռոտ խնդիր մը մէջտեղէն վերցած և խըռ մը պակաս եղած կըլլայ թուր- քին համար :

Յիշեալ սղգայինը այդ անկողմու- կալ և արդար գիտողութիւնները ը- նեղէ վերջը, ուշադրութիւնը հրախրած է բանակցողներուն թէ որչափ ատեն որ ժէճն. թուրքերը շարունակեն այդ գաղափարին ծառայել խելանի հայուն և ոչ մէկը պիտի գտնեն իրենց ճա- նապարհին վրայ որ խոտանայ իր գործունէութիւնը :

ՁԻՊՍՅԻՆ ՓՈՐԸ

Լա պէյ Չիպա, գեղանին Չիպա, ա՛- ւասիկ անունը գեոասի հայ ազնւոյն մը որ ասկէց հարկ տարի մը առաջ, Պոլոս մէկ մտցուած անկիւնը, Տիլիս բանկով փորը կշտացնուած համար վերթորիա խաչիկեան կը կոչուէր : Բայց հիմայ, որովհետեւ Բա- ռիդի մէջ՝ փորն է որ զինքը կը կշտացնէ, իր վրայն սկզբով Սալմաթմարք հատոյ այդ երկայն անունը, որոշած է պարզապէս Չիպա կոչուիլ, Չիպա tout court.

Այսօր, այդ ըստի ճաղաքին մէջ, երբեմնի վերթորիա խաչատուրեանը ծանօթ գէմը մին է որ անհաճօք ըլլալու չէ, եթէ հաւատանք այն անկանին՝ զոր Բարիզաններու հիւ- ցումը աւելցուցած է այդ երկվանի անունին վրայ :

Գեղանի կամ ոչ, Չիպա սովորական աղջիկ մը չէ. ասոր վտտահ կրնաք ըլլալ. Եթէ այդպէս չըլլար, իր ծննդավայրին մէջ խեղճ ու կըրակ, կէս կուշտ — կէս ա- նօթի ապրել պիտի ուզէր սպասելով որ Սուրբ Սարգիս օրին մէկը փեսայ մը զրկէ իրեն փեսայ մը՝ որ կամ ձկնորս մը կրնար ըլլալ և կամ շրջանկի մը :

Եւ ապահովապէս այդ ժողովրդի զաւակը մտածած է թէ՛ տանը չորս պատին մէջ անօթի փոր մը սքողելու տեղ աւելի խելա- ցութիւն և ցուցադրել Բարիզեան թատրոնի մը մէջ փոր մը . . . որ կուշտ է :

Սկսող դարին իմաստութիւնն է այս : Պէ կէնէն ետքը, Պէ ֆաթման. Պէ ֆաթման ետքը Լա Պէ Չիպան, բայց փառք մին է այս որուն յարգը պէտք է լաւ գիտնան Հայերը :

Մանաւանդ մեր ազգին այս անցուկ վի- ճակին մէջ, ուր ընդհանրապէս կուտան անանկանալու վրայ եղող վաճառակալի մը, պէս, կը զարմանամ թէ կը գտնուին մարդիկ որ կը մեղադրեն այդ խեղճ աղջիկը և ան- գթօրէն կը հարուածեն անոր բարոյականը, միևնոյն նա ծառայութիւն մըն է որ կը մատուցանի մեզի, հայ ազգը յիշեցնել տա- լով օտարներուն և անոր վրայ հրախրել տալով ատոնց ուշադրութիւնը. Միթէ միև- նոյն ծառայութիւնը չէ որ կը մատուցանեն, թէև տարբեր կերպով, Չօպանեան մը, Չե- րազ մը, Սիվաճեան մը, Շահին մը, Մա- նուկեան մը և գեո ուրիշներ :

Տարբերութիւնը սա է որ, և ասոր մէջ

ալ Չիպան յանցանք չունի, Աստուած տա- զանդ ըսուած բանը այս վերջիններուն գլխին մէջ գետեղած է, իսկ վերթորիային . . . պորտին վրայ . . . voilà tout :

Երբ Ֆրանսացիք Օթթէրօ մը երկինք կը հանեն, արքայական պատիւներ կընծայեն անոր, չեմ հասկնար թէ ինչու Չիպային վրայ այնչափ գէշ կը խօսին, երբ երկուքին ալ որովայնները միևնոյն հրա- պոյրը ունին իրենց յայրաա շարժուածքին մէջ :

Հիացումէ տարբեր գգացում մը չեմ տածեր հանգիւ պն անուններուն զորս բիշ մը վերը յիշեցի : Քրազա, նկարիչ, ար- ուեստագէտ կամ դաշնակահար ամենքն ալ մեր ազգին պատիւը աւելցնող հայեր են, ամենքն ալ գիտենք ասիկայ. պատճառ մը չի կայ կարծելու համար որգեղանին Չիպա, իր որովայնի խողերով կը պահեցնէ մեր տոհմային արժանապատուութիւնն ունի իսկ հիւրէ մը :

Ընդհակառակը, Ես գրաւ կը դնեմ թէ օրիորդ Չիպա — եթէ երբէք ներքիլ է տակաւին այդ անա- կանը գործածել ազնւոյն մը համար, որ տարիէ մը ի վեր գեղանի ըլլալ սկսած է, մանաւանդ Բարիզի պէս տեղ մը — այո՛, գեղանին Չիպա թերևս իր մէկ փո- ռովը՝ Ֆրանսացիներուն աւելի շատ խօսե- ցնել կուտայ մեր վրայ քան այդ բոլոր գրուիները ի միասին :

— La belle armenienne ! ահա՛ ինչ անուան տակ կը ճանչնան զինքը այն ամբողջ երոպացի բարեկամներս որ ամիս մը առաջ Բարիզին հոս վերապառնան :

Շատ անգամ երոպացիներու հարցուցած եմ թէ արդեօք գիտե՞ն թէ սրտը և կամ ինչ են Բաֆֆի, Պասկանեան, Արիտար, Իզմիրեան, Բաշալեան, Շահին, Ռշտունի, — Հայր և որդի —, Ջուզապետը, Ճիհանիւզ, Ներսէս Պարիսարքը, Այվազովսքի, Սուրբ — Վառնայի Սուրբ, և շատ ուրիշներ ալ :

— Connais pas եղած է ամենուն պատասխանը :

Աւելին կայ : Ասկէց քանի մը ամիս առաջ տեղ մը եգիպտական ծառայութեան մէջ գտնուող և ամիսը 80 ոսկի անող անգլիացի պաշտօ- նատարի մը հանդիպեցայ որուն հետ ու- զեցի մեր ազգին վրայ խօսիլ : Միշոց մը՝

Que pensez vous de Nubar կը հարցունեմ իրեն :

— Aoh ! moi, préférer Splendid Bar.

Ապուր կարծած էր թէ New Bar ի վրայ կը խօսիմ կոր. ուստի՝

— Mais non, je parle de Nubar Pacha կը շեշտեմ.

— Vd pouvez parler ըսելով մեկնե- ցաւ բովէս :

Ազգի մը համարը շինելու համար մեծ դիւանագէտներ, մեծ գրազնաբեր, մեծ ար- ուեստագէտները բաւական չեն, գեղանի Չիպաները շատ անգամ ատոնցմէ աւելի պիտանի գեր մը կրնան կատարել :

Եւ պիտի տեսնանք : Բարոյականի խնդրոյն զալով, օ՛հ նոյն իսկ շարժեր ասոր վրայ վիճարանիլ :

Իրաւ է որ Արշակ Չօպանեան « Առա- հիտ » ի տաղանդաւոր խմբագիրը, անանկ երեմականներ կը կարգայ Չիպայի ըն- թացքին վրայ որ կարծես Գալլիացիները Գաբիթօ ը կը գրաւեն կոր :

Պատաւ, խոֆած կրնե՞րու նման կը գայ- թակղի մեր բարեկամը, երբ հայ Օթթէրօն դմայում կը սփռէ իր շուրջը փորին ելնէլ- ներովը :

Քիչ մը ևս « Առահիտ » ի խմբագիրը մա-

Իր պիտի կապէ գլխուն կարծելով թէ ազգը կը ցածնայ, կը պայտադիւնայ, կը կործանի և կամ կ'անհետանայ կոր սրովհետև Վիքթորիան մէկը — որ անգլիային սլ չէ դոնէ — աջն զեպի ձախ և վերէն զեպի վոր կը շարժեցնէ իր մարմնոյն կեդրոնական մասը:

Ազգի մը բարոյականը, նկարագիրը և արժանապատուութիւնը երբէք չի խախտի նոյն իսկ երբ իր ծոցին մէջ մէկէ աւելի Ձիպաներ գտնուին:

Ձիպային անբարոյականութիւնը շատ շատ մինչև փորը կ'իջնայ, մինչդեռ Բարիքի մէջ, ձեր աչքին տակ եթէ ոչ ձեռքին, 400,000 հորիզոնական էակներ աւելի վար կ'իջեցնեն զայն:

Սակայն Ֆրանսոսն՝ Ֆրանսա ըլլալէ չի գաղտնի. չէ:

Մեզքը մ'աննէք մեր Ձիպային, մարդու քնաս չի հասցնէր անոր սրովայնախաղը, հաստացէք:

Եւ յետոյ, ձեզի բան մը ըսեմ, ես պիտի նախնարէի որ մեր մէջ փոր խաղցընող անպարկեշտ կիներ աւելի շատ գրտնուէին, քան պարկեշտ կիներ որ պոչ կը խաղցնեն:

Յ. Ա. Վ. Փ. Մ.

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ն. Բ. Խտիվը երեկ՝ ուրբաթ, կէս օրէն յետոյ Ապտինի պալատը ունկնդրութեան ընդունեց Առաջնորդ Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան, որ իր առաջնորդական պաշտօնը հաստատող թուղթերը մատուցեց. Բարձրութեան:

— Տեղի ունեցան տեղւոյս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ:

1. Կիրակէ Դեկտեմբեր 30 յետ միջօրէի ժամը 8ին պսակի արարողութիւնը Տ. Ապահ Պետրոսեանի ընդ Օր. Մատի Եագուպեանի:

2. Հինգշաբթի Յունվար 3 յետ միջօրէի ժամ 3ին պսակի արարողութեան հանդէսը Տ. Միհրան Տէր-Ազաճեանի ընդ Օր. Իզապէլ Եագուպեանի:

Մերանկեղծ շնորհաւորութիւնները:

Ազբատախնամ ընկերութեան Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակէ 6 Յունվար 1901 կէս օրէ յառաջ, եկեղեցական արարողութեան անմիջապէս յետոյ, ազգային մանկապարտիզի սրահին մէջ, օրակարգ ունենալով:

Վեցամսեայ հաշուետուութիւն Գործադիր Ժողովոյ:

Դիւանս կը սիրէ յուսալ թէ Պատանգամբ պիտի փութան ներկայ ըլլալ սոյն նստին ուր մանաւանդ տօնական օրերու մերձեցման առթիւ, մասնաւորապէս խորհրդակցութիւնը տեղի պիտի ունենան աղքատաց ըստ կարելոյն նպաստամատոյց ըլլալու ձեռնարկուելիք միջոցներու մասին:

Ի դիմաց Ընդհ. Ժողովոյ Ազբատախնամ ընկերութեան՝

Ատենադպիր Բ. Ատենապետ Հ. Պէրդիբեան Լ. Կիտիճեան

4 յունվար 1901

— Շնորհակալութեամբ ստացանք. բժիշկ Տ. Սիմէան Երանազարեանցի ՄՇԱԿը (25 ամեակի առթիւ) 1896(7

Հ. Հ. կուսակցական պայքարը: Տըպարան Բարեկարգեանի, Մոսկուա 1900, Գրին և Վ. Ռուբլի:

Նոյնպէս նոյն հեղինակի, նոյն թուականի նոյն տպարանէն ելած՝

« Որոշ կանոնադրութեան և ծրարի անհրաժեշտութիւնը և Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների վարչական և Ուսումնական կարգ ու կանոնի Դիտարկման միակերպութեան պաշտպարը:

Գրին և Վ. Ռուբլի, Դիմել Մոսկուա, հեղինակին հասցէին:

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Այլի Տիկին Ա. ԳԱՐԱՄԱՃԵԱՆ, Տիար ՄԱՆՈՒԷԼ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ, Տէր և Տիկին ՄԱՀԻԼԵԱՆ, Տիար ԳՐԻԳՈՐ ԿԻՒՐՃԵԱՆ կը փութան իրենց խորին շնորհակալութիւնները հայտնել այն ամեն ազգականաց բարեկամաց որք հաճեցան ներկայ գտնուիլ ՏԻԱՐԱՍԵՓԱՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆԻ յուղարկաւորութեան տիրուր հանդիպին, և արտայայտեցին իրենց ցաւակցութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՆԹՆԷԿԻՐՕ. — Եւրոպայի մէջ միապետ մ'ալ աւելցաւ, Մոնթէնէկոյի իշխանը թագաւոր օծուած է: Մեծամեծ հանդէսներ կատարուած են այս առթիւ:

Թագաւորը դիւանագիտական մարմնոյն դիմած է յայտնելով իրեն երախտագիտութիւնը անոնց իրենց ցոյց տուած բարեկամութեան ու ըրած պատուոյն մասին:

— « Վէսէր Յայթունկ » Պօէրնու բանակին մէջ ծառայող զերման սպայի մը մէկ յօգուածը կը հրատարակէ, որուն մէջ ակներև կ'երևին թէ Անգլիացիք ս'ը աստիճան վատ կերպով կը վերաբերուին իրենց գերի բռնած զերի Պօէրնուին հետ: Այս սպան ինքն ալ գերի բռնուած է, և կ'ըսէ թէ, Թրանսվալի և Օրանսի ներսերը ամենատաժանակիբ աշխատութեանց կենթարկին զանոնք: Անգլիացիք իրենց գերի բռնած Պօէրնուը իբրև բանտարկեալ չ'են վարուիբ անոնց հետ, այլ իբրև տարապարհակ աշխատողներ:

— Լահէյին յունվար 2 թուով Ռիթերի բաշած մէկ հեռագրին նախելով, Պ. Քրուկէր, Թրանսվալի նախագահը պրօնոյից եղած է:

— Բէքրնէն « Թայմ »-ի կը գրեն թէ Ռուսիա Չինաստանի հրաման տուեր է Մանչուրիէն մաս մը ետ առնելու, պայմանաւ որ Ռուսիոյ պաշտպանութեան ներքև ըլլայ ան: Մուքոնի մէջ ուս պատուիրակութիւն, մը պիտի հաստատուի: Անգլիոյ Հնդկաստանի մէջ ունեցած պատուիրակութեան նման:

ՉԱՐԻՆ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆԸ

Սէն Բէդրուպուրկէն դեկտեմբեր 14 թուականաւ երկար նամակ մը կը գրէ « Թայմ »-ին իր թղթակիցը:

Թղթակիցը մանրամասնաբար կը նկարագրէ վեհապետին առժամանակեայ կերպիւ ո' և է գործ ընելու անկարողութեան պատճառաւ տուած եկած անտեղութիւնները:

Կառավարական գործերը կանգ առնել են, ու զլիաւոր նախարարները գործերին ձգած լիվատիա (Չարին եղած տեղը) դացնել են, և արտաքին գործոց նախարարութեան բարձր պաշտօնեաներէն մէկ հաս միայն մնացած է որուն գործը դեալուննէ: Ըրուն հարցուցածին պատասխան տալ է, ու ան ալ բան մը չգիտեր, և, հետեւաբար, անոնց հարցումներուն չ'կրնար գոհացուի տալ:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

« Ս. Պիտ. Վիտ » Ռուսական լրագրէն առնելով « Նոր-Դար » կ'ըսէ. Թուրք կառավարութեան և Հայոց Պատրիարքարանի միջև լուրջ հակառակութիւն կայ, որոնք կարող են առիթ տալ կամ հայերու հովանաւորող օտարերկրեայ պետութիւններէն մէկուն միջամտութեան, կամ թէ Օրմանեան պատրիարքին հրաժարակալին: Կրթական գործոց նախարարը պատրիարքէն պահանջած է, որ իւրաքանչիւր ազգային վարժարան իր պատասխանատու տեսուչն ունենայ նոյն վարժարանի ուսուցիչներու մէջէն, որու անունով պէտք է տրուի յիշեալ վարժարանի բացման և պահպանման իրաւունքը:

Պատրիարքը այդ բանին հետեւալը պատասխանել է « բոլոր ազգային վարժարաններու համար պատասխանատուութիւնը ֆերմաներով յանձնուած է իրեն պատրիարքին: Անորմէ կախուած է վարժարաններու բոլոր ներքին կառավարութիւնը: Յետոյ նրկատի առնելով որ ուսուցիչները յաճախ կը փոխուին, անոնցմէ և ոչ մէկուն կարելի չէ յանձնել մշտական տեսչի պաշտօնը:

Բաց աստի Թուրքիոյ Մահմետական դպրոցներու մէջ ևս այդպիսի կարգ մը գրուած չէ, ինչու համար ուրեմն կրթական գործոց նախարարութիւնը կուզէ մացնել քրիստոնեայ դպրոցներու մէջ: Ասոր վրայ կըրթական գործոց նախարարը իբր թէ ընդ միջոցներու դիմել է և արդիւր է մինչև իսկ որ գաւառները հայերէն դասագիրքեր չի դրկուին, և կամ այդ գրքերի վրայ չափազանց մեծ մարս գրուին:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Մէկ կողմէն Պօէրնուը դեռ կը պատերազմին, միւս կողմէն անգլիական կառավարութիւնը Պօէրնուը երկիրները կազմակերպելով կ'ըրազի: Ընտանէն 4 յունվար թուականաւ հասած Բէօթէրի հեռագրի մը կը ծանուցանէ թէ Պ. Միլնէր Թրանսվալի և Օրանսի ընդհանուր կուսակալ կարգուած է անգլիական կառավարութեան կողմէն:

Շարթուած մէջ յաջորդաբար հասած հեռագրիներուն նայելով Պօէրնուը Յունվար 2ին առաւօտեան մտ յարձակեցան Հէլվէդիայի պահականոցին վրայ, գրաւեցին թնթանութիւնը, չարս սպայ և քրանի մօտ գիւղերներ վիրտուրուեցան սոյն կողմի մէջ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Տեղւոյս Երևմտեց նախարարը օրերս 120 սակի պիտի զրկէ Պօլիս Գափուրէթի խաւառային Բամազանի տութիւ:

Այս բարձր պաշտօնեան որ տարեկան 1380 սակի կ'առնէ, պաշտօնն է Սուլթանէն լուրեր հաղորդել Ն.Ֆ. Խտիվին, և փոխադարձաբար: Սա իր ձեռաց տակ բարաւազար մ'ունի, որուն տարեկան 421 սակի կը վճարէ, և չորս օգնական:

Խտիվի դեպքանին պիտու ծախքերը Եզիպտոսի գանձն է որ կը վճարէ:

— Գահիրէի կառավարչութիւնը հետեւալ սրշտուներն ըրեր է պիտի/իխսներուն համար:

1. Հեծանիկ նստողներուն արդիւրեալ է հեծանիկով մայթերու վրայէն անցնել: Ի բաց առեալ այն ատեն, երբ կուզուի մէկ կողմէն միւս կողմն անցնել տուն մը մտնելու համար:

2. Հեծանիկ նստողները պէտք է միշտ ճամբուն ալ կողմէն երթալ, և երբէք չափազանց աքազ շարժման մէջ դնեն զանոնք:

3. Արեւ մարը մտնելէն անմիջապէս վերջը պէտք է իրենց հեծանիկներուն լամբարը վառեն:

4. Ով որ այս կանոնին հակառակ շարժի, ըլլայ օտարահպատակ, ըլլայ տեղացի, պիտի պատժուի:

— 1900 ին Ալէքսանդրիոյ նաւահանգիստը 1371 (357 անգղիական, 814 ուրիշ ազգերէ) նաւ մտեր է, որ ըսել է 191 նաւ կայ եզեր հոն 1901 յունվար 1ին:

— « Գուռիէ սիւ Նիլ »-ի ըսածին նայելով, Լորտ Քրոմըր Սուտան ճամբորդելու ատեն ուր որ գացած է պաղ ընդունելութիւն մը գտեր է: Պէրպէլի մէջ Ն. Վ. կառավարական շէնքերն ու դպրոցներն այցելած է, ինչպէս նաև մզկիթները ու աղքատներուն ողորմութիւն բաշխել տուած է: Լորտ Քրոմըր վերադարձին այցելած է Ասուանի Զրամբարները, միւս օրը եկած է Լուքսոր, ուր մէկ երկու օր մնալէ վերջ, այսօր կէս օրէն վերջը ժամը 5ին Գահիրէ պիտի հասնի:

— Ալէքսանդրիային կը հեռագրեն թէ Չմիւռնիոյ մէջ ժամախտի դէպք մը պատահած է:

Վ Ե Ր Զ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Լա-Հէէն « Աժան » Օրիէնթալի երեկուտն թուականաւ հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ նախագահ Քրուկէրի վեճակը ծանրացած է:

Ընտան, 2 յունվար վիքթորիա Թագուհին առաջիկայ մարտ ամսոյն Սիմիէզ (Ֆրանսա) պիտի երթայ:

Ընտան, 2 յունվար Լորտ Ռուպըրտ, ի վարձատրութիւն իր մատուցած ծառայութեանց կ'ոտուրեան աստիճանին բարձրացաւ:

ԼՐԱՔԱՂ

— Վեհափառ Հայրապետը երկու մասնագէտ է հրատարակել Ս. Էջմիածին. մի գիւղատնտես՝ Պ. Մեղրոն Ղազարոսեան, որ Ֆրանսայի մէջ է կատարելագործել իւր գիւղատնտեսական մասնագիտութիւնը, և մի շերամապահ՝ Պ. Խաչիկ Թորոսեան, յայտնի մասնագէտ որ թիւրքիայի Բրուսայի շերամապահական կայարանից առաջին կարգի մրցանակի է արժանացած: Պ. Խ. Թորոսեան երեք տարւոյ ժամանակով պայմանաւորուած է վանքի բազմաթիւ թիֆնիները պուրակի և շերամատան համար վանական կառավարութեան հետ. մինչև այժմ անմշակ թողուած թիֆնիները տարե ցտարի պիտի խնամուին այդ մասնագէտի ձեռքով, որից մեծ շահ է ակնկալուում: Գիւղատնտեսութեան մասնագէտ Պ. Մ. Ղազարոսեանի համար ճեմարանին մօտիկ շինուած է մի առանձին « պլան », ուր պահուում են 8 կով և 4 մատակ դոմէշ. այդ ճեմարանի սաները գործնականապէս պիտի սորվին անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն: Միևնոյն ժամանակ անոր տրամադրութեան տակ դրուած է մի ընդարձակ արտ, ուր երկրագործական փորձեր պիտի կատարեն ճեմարանի սաներն իրենց մասնագէտի առաջնորդութեան տակ: Արդէն Ֆրանսայէն բերել տրուած են սերմերի ընտիր տեսակներ. վեհ. Հայրապետի այս նոր ձեռնարկներէն մեծ օգուտներ կարելի է սպասել: Միայն ցանկալի է որ վանական միաբանութիւնը, որն ամեն օգտակար ձեռնարկների խուլ թըշնամին է եղեր միշտ, այս անգամ ալ իւր ահաճելի արգելքներով խոչընդոտ չհանդիսանայ այդ մասնագէտների գործունէութեանը:

«ՆՈՐ-ԴԱՐ»

Նոր ձայն մ'ալ Ամերիկայի Նիւ-Եորք բաղաբէն:

« վանայ նահանգին երկրագործական օժանդակ միութիւն » անուամբ ընկերութիւն մը կազմուած է, որոյ նպատակն է վանայ նահանգին ու և է ազգային դպրոցի և կամ կրթական հաստատութեան օգնել նիւթապէս, որպէս զի երկրագործութեան տեսական և գործնական ճիւղը մշակուի և աշակերտները զարգանան երկրագործութեան և գիւղատնտեսութեան նորանոր մեթոտները ուսանելով:

Սոյն միութիւնը պիտի աշխատի այդ հաստատութեանց կարող դասարաններ, գործիքներ և պիտոյքներ հայթայթելու միջոցներուն վրայ, և այդ առթիւ բոլոր հայերուն ուղղեալ կողմը ըրած է:

« Բառի Նուվէլ » ուրիշ կը բաղնէր այս տեղեկութիւնները, փափաք կը յայտնէ որ այս գործը ոչ միայն վանի այլ հայաբնակ բոլոր գաւառներուն տարածուի ապահովելու համար Հայոց երկրագործական ապագան:

ԱԶԴ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շաբա Ապտ-էլ-Ապրի սկիզբը Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԻԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Դըթ-Պէյ փողոցի ծայրը և թըրամվէյներու կայարանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՏՊԵԱՆԻ քով:

Ա Զ Դ

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խանութը ի Շաբա Ապտ-էլ-Ապրի:

ՕՐԱՑՈՅՑ
ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
1901 ՏԱՐԻՈՅ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. ՓՐԿՁԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ
ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ
ՊԱՏԿՆԵՐԱԶԱՐԿ

Երջակայ գիւղերէն եկած յանձնարարութիւնը փութով կը կատարուին: Իմեղ վերոյիշեալ հասցէին:

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիւնի հանրաժանութ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վտահուլիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիւնի բաղաբազմութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիւնի գիւղացի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆուէտի ֆոնդիէի, վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ, մասկան չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին գիմել Նիւպոտի վրայ փաստարան Ռարթաքի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեւեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ
Պ. ՆԻԿՈՂԻՍՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկունը:

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱԵԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապօրինի մեծ պողոտային վրայ Տայիայի Սանյիէի դիւպըր, Ասիական հիւրանոց գործիներու վան առասուր:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան լծէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմել Պատ. յաճախողները, գործի մաքրութեան, զինքնու չափաւորութեան և ճշգրտահոլութեան կողմէն:

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

ՃԱՇԱՐԱՆ ԿԱՅԿԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՔ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շաբա Ապտ-Սապահ
Նիւու-Տնիվեթէյ Դեղաբանին դիւպըր.

Օգտուն ու գուարճալի գիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու սննդարար կերակուրներու գանազանութիւնն, անխաղախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը գիւրամատչելի գիներով ահա՛ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

* **ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ** *

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տ շարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեատմաներ, մահազգեր, հարսանեաց հրատարակներ, կանոնագիրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն ինստիօք եւ մաշակաւոր սպաքորթեանը:

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ